

Հաստատված է՝
«Թրանսփարենսի Ինթերնեշնլ
հակակոռուպցիոն
կենտրոն» հասարակական
կազմակերպության
արտահերթ ընդհանուր ժողովի կողմից

20-ը օգոստոսի 2012թ.

Գործադիր տնօրեն՝

Վ. Հոկտանյան



Գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից
17 ապրիլի, 2003թ.
գրանցման N 211.171.01741
վկայական N 03Ա-060363
Հ.Հ.Հ. 00063072

Թիվ 1-2 փոփոխությունը գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի
կողմից
21 փետրվարի, 2006թ.

Թիվ 2-2 փոփոխությունը գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի
կողմից
11 փետրվարի, 2008թ.

Թիվ 3-2 փոփոխությունը գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի
կողմից
11 մայիսի, 2009թ.

Թիվ 4-2 փոփոխությունը գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի
կողմից
«18» 09 2012թ.

Պետական ռեգիստրի ղեկավար՝

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»
հասարակական կազմակերպության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Դ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(սոր խմբագրություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ չիետապնդող հասարակական միավորում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության (հետայսու՝ ՀՀ) Սահմանադրության, ՀՀ օրենսդրության և սույն կանոնադրության համաձայն:
- 1.2 Կազմակերպությունը գործում է օրինականության, կամավորության, թափանցիկության, հրապարակայնության և ինքնակառավարման սկզբունքներով:
- 1.3 Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:
- 1.4 Կազմակերպության անդամները Կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի՝ ներառյալ անդամավճարների նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների, իսկ Կազմակերպությունը՝ իր անդամների պարտավորությունների համար:
- 1.5 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև օտարերկրյա պետություններում՝ այդ երկրների օրենսդրությանը համապատասխան:
- 1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ:
- 1.7 Կազմակերպության անվանումն է.
 - հայերեն՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն (հապավում՝ «ԹԻՀԿ» ՀԿ),
 - ռուսերեն՝ "Антикоррупционный центр Транспаренси Интернешнл" общественная организация (հապավում՝ «АИТИ» ОО),
 - անգլերեն՝ "Transparency International Anticorruption Center" public organization (հապավում՝ "TIAC" PO).
- 1.8 Կազմակերպության խորհրդանիշն իրենից ներկայացնում է մուգ կապույտ գույնի երկրագնդի պատկեր, որի վրա պատկերված են հատվող գրոյական միջօրեականը և հասարակածը, որոնք ձևավորում են լատինատառ «Т» մեծատառը: Հատման կետից ներքևի աջ հարթությունում միջօրեականին զուգահեռ գծված է ուղիղ գիծ, որը ձևավորում է լատինատառ «i» փոքրատառի ուղղահայաց մասը, իսկ հասարակածի վերևի հարթությունում՝ այդ տառի «գլխիկը» կետի տեսքով՝ համաձայն սույն կանոնադրության հավելվածի:
- 1.9 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ և այլ հաշիվներ բանկերում՝ ՀՀ դրամով և օտարերկրյա արժույթներով, հայերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք՝ իր խորհրդանիշով:
- 1.10 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0025, Այգեստան 9-րդ փողոց, տուն 6:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. Կազմակերպության նպատակն է կոռուկցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Չայաստանում:
- 2.2. Կազմակերպության խնդիրներն են՝
- ա) աջակցել արդյունավետ հակակոռուկցիոն քաղաքականությանը և թափանցիկ ու հաշվետու կառավարմանը,
 - բ) աջակցել ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացմանը և ընտրական ինստիտուտի կայացմանը,
 - գ) նպաստել հանրային ռեսուրսների, այդ թվում՝ պետական և համայնքային սեփականության ու ֆինանսական միջոցների ողջամիտ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը,
 - դ) խթանել ժողովրդավարական գործընթացները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և հասարակության մասնակցությունը երկրի կառավարման գործընթացներում:
- 2.3 Կազմակերպության գործունեությունն ընդգրկում է՝
- ա) քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում ուսումնասիրությունների իրականացում, հանրային քաղաքականության մոնիտորինգ և գնահատում.
 - բ) ընտրությունների և հանրաքվեների նկատմամբ հասարակական վերահսկողության, այդ թվում՝ դիտորդական առաքելության իրականացում,
 - գ) հանրային քաղաքականության և կառավարման գործընթացների վերաբերյալ հասարակության իրազեկում, իրավագիտակցության բարձրացում և մասնակցային կարողությունների զարգացում,
 - դ) համակարգային բնույթի բարեփոխումների վերաբերյալ առաջարկների մշակում և ջատագովության, այդ թվում՝ հասարակության մոբիլիզացիայի, քարոզչության և լոբբինգի իրականացում,
 - ե) կոռուկցիոն երևույթների առնչությամբ մասնագիտական, այդ թվում՝ իրավաբանական աջակցության տրամադրում շահագրգիռ կողմերին՝ պետական կառույցներին, մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչներին,
 - զ) իր և իր անդամների, կազմակերպության շահառուների, ինչպես նաև՝ կազմակերպության նպատակների շրջանակներում՝ հանրության/այլոց իրավունքների և շահերի ներկայացում և պաշտպանություն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ընդհուպ՝ խախտված իրավունքների պաշտպանություն դատարանում:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- 3.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են Ընդհանուր ժողովը, Խորհուրդը և Գործադիր տնօրենը:
- 3.2. Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինը Կազմակերպության Ընդհանուր ժողովն է (այսուհետ՝ Ընդհանուր ժողով):
- 3.3. Կազմակերպության ընթացիկ կառավարման մարմինը Կազմակերպության Խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):
- 3.4. Կազմակերպության առաքելության և նպատակների իրականացմանն ուղղված ամենօրյա գործունեությունը համակարգում և ղեկավարում է Կազմակերպության Գործադիր տնօրենը (այսուհետ՝ Գործադիր տնօրեն):

3.5. Գործադիր տնօրենը կարող է իր լիազորությունների մի մասը հանձնել աշխատակազմի այլ անդամներին:

3.6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

3.6.1 Ընդհանուր ժողովը գումարվում է Խորհրդի կողմից երկու տարին մեկ անգամ: Արտահերթ ժողով կարող է հրավիրվել Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի պահանջով:

3.6.2 Ընդհանուր ժողովի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին Կազմակերպության անդամները ծանուցվում են հեռահաղորդակցության միջոցներով՝ Ընդհանուր ժողովից առնվազն 14 օր առաջ:

3.6.3 Ընդհանուր ժողովն իրավագոր է, եթե դրան ֆիզիկապես կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ մասնակցում են Կազմակերպության անդամների պարզ մեծամասնությունը:

3.6.4 Ընդհանուր ժողովը որոշումներ է ընդունում կազմակերպության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3.6.5 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

- ա) Կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը կամ նոր կանոնադրության հաստատումը,
- բ) Կազմակերպության անդամակցության և անդամակցության դադարեցման, այդ թվում՝ հեռացման վերաբերյալ որոշումների ընդունումը,
- գ) Կազմակերպության գործունեության ռազմավարության հաստատումը,
- դ) Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների հաստատումը,
- ե) Կազմակերպության Խորհրդի ընտրությունը և նրա անդամների լիազորությունների վաղաժամ դադարեցման հաստատումը,
- զ) Կազմակերպության անդամավճարների չափի ու վճարման կարգի հաստատումն ու փոփոխումը,
- է) Կազմակերպության վերակազմակերպման ու լուծարման մասին որոշումների ընդունումը,
- ը) Կազմակերպության առաքելության և նպատակների իրականացմանն ուղղված գործունեության վերաբերյալ Գործադիր տնօրենի հաշվետվության հաստատումը:

3.6.6. Ընդհանուր ժողովը վարում է Խորհրդի նախագահը:

3.7 ԽՈՐՀՈՒՐԸ

3.7.1 Խորհուրդը ձևավորվում է Ընդհանուր ժողովի կողմից Կազմակերպության անդամների կազմից՝ ընտրության միջոցով: Ընտրության կարգը սահմանում է Ընդհանուր ժողովը: Խորհրդի անդամները պաշտոնավարում են երկու տարի: Խորհրդի անդամների թիվը սահմանում է Ընդհանուր ժողովը՝ նվազագույնը հինգ, առավելագույնը՝ ինը անդամի կազմով՝ կենտ թվով:

3.7.2 Խորհրդի անդամ կարող է ընտրվել Կազմակերպության այն անդամը, որն անդամակցում է առնվազն երկու տարի և ընդգրկված չէ Կազմակերպության աշխատակազմում: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Խորհրդի կազմում:

3.7.3 Խորհուրդը կառավարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում: Խորհուրդն իր

գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից: Արտահերթ նիստ կարող է իրավիրվել Խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի պահանջով կամ Գործադիր տնօրենի առաջարկությամբ:

3.7.4 Խորհուրդն իր կազմից ընտրում է Խորհրդի նախագահ՝ երկու տարի ժամկետով: Խորհրդի նախագահը իրավիիրում, կազմակերպում և վարում է Խորհրդի նիստերը՝ Կազմակերպության աշխատակազմի աջակցությամբ: Խորհրդի նախագահը հանդես է գալիս Խորհրդի անունից Գործադիր տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս:

3.7.5 Խորհրդի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Խորհրդի անդամի՝

- ա) իր դիմումի հիման վրա,
- բ) Խորհրդի նիստերից երեք անգամ անընդմեջ անհարգելի բացակայելու դեպքում,
- գ) Կազմակերպության վարչագծի կանոնները խախտելու դեպքում, որի արդյունքում վտանգվել կամ կարող է վտանգվել Կազմակերպության հեղինակությունը կամ բարի համբավը:

Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ Խորհրդի ներկայացմամբ: Սույն կետի «բ» և «գ» ենթակետերով սահմանված հիմքերով լիազորությունների դադարեցման դեպքում Խորհրդի անդամը Խորհրդի պահանջով ներկայացնում է գրավոր բացատրություն: Եթե Խորհրդի սահմանած ողջամիտ ժամկետում Խորհրդի անդամը առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա լիազորությունների դադարեցման մասին որոշումը կարող է ընդունվել առանց բացատրության: Խորհրդի կազմի թափուր տեղը համալրվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

3.7.6 Խորհրդի նիստի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին Խորհրդի անդամները ծանուցվում են հեռահաղորդակցության միջոցներով նիստից առնվազն 7 օր առաջ: Արտահերթ նիստերի վերաբերյալ ծանուցումը տրվում է նիստից առնվազն 3 օր առաջ:

3.7.7 Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան ֆիզիկապես կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ մասնակցում են Խորհրդի անդամների պարզ մեծամասնությունը:

3.7.8 Խորհուրդը որոշումներ է ընդունում նիստին ֆիզիկապես կամ հեռակա կարգով մասնակից անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

3.7.9 Խորհրդի իրավասությունների շրջանակն ընդգրկում է՝

- ա) Ընդհանուր ժողովի գումարումը, դրա օրակարգի և գումարման կարգի սահմանումը,
- բ) Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը՝ վերջինիս բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,
- գ) Կազմակերպության ռազմավարության մշակումը և ներկայացումը Ընդհանուր ժողովի հաստատմանը,
- դ) Կազմակերպության վարչակազմակերպչական կառուցվածքի հաստատումը,
- ե) Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի, այդ թվում՝ վարչագծի կանոնների հաստատումը,
- զ) Գործադիր տնօրենի ընտրության և նրա լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումների ընդունումը,

- ե) Կազմակերպության ընթացիկ գործունեության և իրականացվող ծրագրերի վերաբերյալ Գործադիր տնօրենի ներկայացրած տեղեկատվության ի գիտություն ընդունումը,
 - ը) Կազմակերպության անդամավճարների չափի և դրանց գանձման կարգի վերաբերյալ առաջարկության մշակումը և ներկայացումը Ընդհանուր ժողովի հաստատմանը,
 - թ) Ցանկացած այլ հարցի լուծումը, բացառությամբ Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:
- 3.7.10 Խորհրդի անդամը կարող է Խորհրդի որոշմամբ ներգրավվել Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերում՝ որպես փորձագետ: Խորհրդի անդամը կարող է ներգրավվել Կազմակերպության ծրագրերի համար ֆոնդերի հայթայթման գործընթացում՝ Խորհրդի որոշման հիման վրա:
- 3.7.11 Խորհրդի անդամների ֆինանսական և այլ շահերը հայտարարագրվում և տեղադրվում են Կազմակերպության ուստ կայքում:

3.8 ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

- 3.8.1 Գործադիր տնօրենը ընտրվում է Խորհրդի կողմից:
- 3.8.2 Գործադիր տնօրենը՝
- ա) կազմակերպում և ղեկավարում է Կազմակերպության ամենօրյա գործունեությունը,
 - բ) առանց լիազորագրի ներկայացնում է Կազմակերպությունը պետական մարմիններում, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխհարաբերություններում,
 - գ) տնօրինում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը՝ այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,
 - դ) կնքում է աշխատանքային, ծառայությունների մատուցման և այլ պայմանագրեր,
 - ե) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ,
 - զ) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է հրահանգներ և վերահսկում է դրանց կատարումը, տալիս է լիազորագրեր,
 - է) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
 - ը) իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման ուղղված այլ գործառնություններ, բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված Ընդհանուր ժողովի և Խորհրդի իրավասության հարցերի:
- 3.8.3. Գործադիր տնօրենը կարող է աշխատանքի ընդունել համապատասխան աշխատակազմ՝ իրեն վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու համար:

4. ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

- 4.1 Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ընդհանուր ժողովը:
- 4.2 Կազմակերպությունն իր ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով կարող է պատվիրել արտաքին աուդիտ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՂԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆՂԱՍՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՆՂԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 5.1 Կազմակերպության անդամ կարող է դառնալ բարձրագույն կրթություն ունեցող ցանկացած անձ, ով ընդունում է Կազմակերպության կանոնադրությունն ու նպատակները և ցանկանում է մասնակցել Կազմակերպության գործունեությանը:
- 5.2 Կազմակերպությանը անդամագրվելու վերաբերյալ որոշումը կայացվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ անդամակցել ցանկացող անձի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա և Կազմակերպության առնվազն երկու անդամի երաշխավորմամբ:
- 5.3 Կազմակերպության անդամի անդամակցությունը դադարեցվում է՝
- ա) իր դիմումի հիման վրա,
 - բ) առանց հարգելի պատճառի երկու անգամ անընդմեջ Ընդհանուր ժողովին չմասնակցելու դեպքում,
 - գ) Կազմակերպության վարքագծի կանոնները խախտելու դեպքում, որի արդյունքում վտանգվել կամ կարող է վտանգվել Կազմակերպության հեղինակությունը կամ բարի համբավը:
- Կազմակերպության անդամի անդամությունը դադարեցնելու մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ Խորհրդի ներկայացմամբ: Սույն կետի «բ» և «գ» ենթակետերով սահմանված հիմքերով անդամությունը դադարեցնելու դեպքում Կազմակերպության անդամը Խորհրդի պահանջով ներկայացնում է գրավոր բացատրություն: Եթե Խորհրդի սահմանած ողջամիտ ժամկետում Խորհրդի անդամն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա լիազորությունների դադարեցման մասին որոշումը կարող է ընդունվել առանց բացատրության:
- 5.4 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
- ա) ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում,
 - բ) ստանալ սպառիչ տեղեկություններ Կազմակերպության գործունեության վերաբերյալ,
 - գ) Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով դրա կառավարման մարմիններին ներկայացնել առաջարկություններ,
 - դ) մասնակցել Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերին և միջոցառումներին,
 - ե) բողոքարկել Խորհրդի և Գործադիր տնօրենի որոշումները Ընդհանուր ժողովին,
 - զ) դադարեցնել անդամակցությունը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Խորհրդին:
- 5.5 Կազմակերպության անդամը պարտավոր է՝
- ա) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,
 - բ) մասնակցել Ընդհանուր ժողովին, իսկ Խորհրդի անդամ լինելու դեպքում՝ նաև Խորհրդի նիստերին,
 - գ) պահպանել կազմակերպության վարքագծի կանոնները,
 - դ) բարեխղճորեն կատարել Խորհրդի որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,
 - ե) հոգ տանել Կազմակերպության հեղինակության բարձրացման համար,
 - զ) Կազմակերպության անդամին ոչ հարիր վարքագիծ դրսևորելու դեպքում Խորհրդի պահանջով և սահմանված ժամկետում տալ գրավոր բացատրություն,
 - է) վճարել անդամավճար՝ Խորհրդի կողմից սահմանված չափով և կարգով:

5.6 Կազմակերպության կանոնադրական պահանջները խախտող անդամի նկատմամբ Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են կիրառվել կարգապահական միջոցներ՝ ընդհուպ մինչև Կազմակերպության անդամությունից հեռացումը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Կազմակերպության կառավարման մարմինների որոշումները կարող են բողոքարկվել Կազմակերպության անդամների կողմից համապատասխան որոշումն ընդունող մարմնի վերադաս մարմիններում:

6.2 Ընդհանուր ժողովի կողմից ընդունվող որոշումները, ինչպես նաև Կազմակերպության կառավարման բոլոր մարմինների ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Կազմակերպությունը կարող է ունենալ շենք, շինություններ, բնակարաններ, տրանսպորտային միջոցներ և օրենսդրությամբ չարգելված այլ գույք:

7.2 Կազմակերպության գույքը գոյանում է իր անդամների՝ Կազմակերպությանը հանձնած գույքից, անդամավճարներից, նվիրատվություններից, դրամաշնորհներից, բարեգործական ներդրումներից, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

7.3 Կազմակերպության գույքը և միջոցները օգտագործվում են բացառապես Կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացման համար:

7.4 Կազմակերպության անդամները Կազմակերպության սեփականության նկատմամբ բաժնի իրավունք չունեն և իրենց կողմից Կազմակերպությանը հանձնած գույքի՝ ներառյալ անդամավճարների նկատմամբ իրավունքներ չեն վերապահում:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ընդհանուր ժողովի որոշմամբ օրենքով սահմանված կարգով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:

8.2 Կազմակերպությունը կարող է լուծարվել Ընդհանուր ժողովի կամ դատարանի որոշմամբ:

8.3 Կազմակերպության լուծարման մասին որոշում ընդունելուց հետո հինգ օրվա ընթացքում Ընդհանուր ժողովը այդ մասին հայտնում է պետական ռեգիստր Կազմակերպության լուծարման գործընթացում գտնվելու մասին պետական գրանցամատյանում գրառում կատարելու համար:

8.4 Կազմակերպության լուծարմամբ դրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության սկզբունքով այլ անձանց անցնելու:

8.5 Կազմակերպության լուծարման դեպքում Ընդհանուր ժողովը ստեղծում է լուծարային հանձնաժողով, որը Կազմակերպության պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո Կազմակերպության մնացած գույքը օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների և խնդիրների իրագործման համար, իսկ եթե անհնար է՝ փոխանցում է պետական բյուջե:

ՀԱՎԵԼՎԱԾ





Handwritten text in Armenian:
 Կապիտալի 5-
 ԳՕ (պաշտոն)
 Բեռնային և
 Կապիտալի Կենտրոնի

